

## **ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա առիթով**

Հարգելի ուսուցիչներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Ուսուցչի օրվա առիթով և մեծարանքի ու երախտագիտության ամենաջերմ խոսքերը հղում բոլորիդ:

Այս տոնը թանկ ու հիշարժան է բոլորիս համար: Ավանդույթի ուժով հայ ժողովուրդը միշտ հարգանքով ու ակնաձանքով է վերաբերվել Ուսուցչի կոչմանը: Դուք բոլոր ժամանակներում, անկախ ամեն ինչից, անձնվիրաբար նվիրվել եք մատաղ սերնդի դաստիարակության գործին, նրանց մեջ սերմանել սեր դեպի կրթությունը, ընտանիքն ու հայրենիքը:

Հիրավի, ձեր աշխատանքն արժանի է բարձր գնահատականի ու խոնարհումի:

Դուք ամենօրյա քրտնաջան աշխատանքով ձեր ավանդն եք ներդնում հայրենիքի զարգացման, պետության կիրթ ու արժանի քաղաքացիների ձևավորման գործում՝ անմնացորդ նվիրումով տալով նրանց հայեցի կրթություն և բարոյական ու ազգային արժեքների ոգով դաստիարակություն:

Թանկագին ուսուցիչներ, կրկին շնորհավորում եմ բոլորիդ այս հրաշալի տոնի առիթով և մաղթում ամուր առողջություն, մեծագույն հաջողություններ ձեր չափազանց կարևոր և պատասխանատու աշխատանքում, երջանկություն և այնպիսի ուշիմ աշակերտներ, ովքեր վաղը իրենց մեծ գործերով կդառնան ոչ միայն իրենց ծնողների և ուսուցիչների, այլև բոլորիս հպարտությունը:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**



**Ս. Խաչատրյան**

5 հոկտեմբեր 2012թ.